ԼԵՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
ՀՀ ԳԱԱ Մ. Քոչարյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի գիտաշխատող, տ.գ.թ.

ՀՀ ՄԱՐԶԵՐՈՒՄ ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆԵՐՈՒԺԻ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐ

Գյուղատնտեսական տարածքների զարգացման բնագավառում առանձնահատուկ կարևորվում է ագրարային հատվածի աստիճանական կայացումը: Ողորտում նկատվում է համախառն արտադրանքի դինամիկ աճ / 2002թ.՝ 377.6, 2003թ.՝ 410.1, 2004թ.՝ 504.1, 2005թ.՝ 499.0, 2006թ.՝ 555.9, 2007թ.՝ 633.9 մլրդ դրամ/, որը գյուղատնտեսական արտադրության ինտենսիվացման, սննդամթերքի ներքին շուկայի տարողության բարձրացման և արտաքին նոր շուկաներում իրացված արտադրանքի ծավալների աճի արդյունք է: ՀՆԱ-ում ճյուղի տեսակարար կշիռը 2002-2006 թթ. միջինը կազմել է 20.8%, նույն ժամանակահատվածում արտաքին առևտրաշրջանառությունում պարենամթերքի ներմուծման բաժինը՝ 17.9% է, իսկ արտահանումը՝ 11.7%: Պարենամթերքի արտաքին ապրանքաշրջանառության մակարդակը չի կարելի համարել բավարար, քանի որ 1. ներմուծվող մի շարք պարենային ապրանքատեսակներ նախկինում բավարարում էր տեղական արտադրության հաշվին, 2. կրճատվել են որոշ գյուղմթերքների թարմ վերամշակված վիճակում արտահանման ծավալները:

Ըստ հանրապետության ազգային պարենային հաշվեկշռի տվյալների՝ աճում է երկրի պարենային ինքնաբավարարության մակարդակը: Այսպես՝ կարևորագույն պարենամթերքներով՝ կարտոֆիլ, բանջարեղեն, միրգ, խաղող, կաթ, միս և այլն, ինքնաբավարարվածությունը կազմում է համապատասխանաբար՝ 99.9%, 101.7%, 95.7%, 98.2%, 101.8%, 99.8%, իսկ միսը՝ մոտավորապես 80.0% (տե՛ս գծապատկեր 1):



Գծապատկեր 1. ՀՀ ազգային պարենային հաշվեկշիռը (2004-2006թթ.), հազ.տոննա[1]:

[1] Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ տվյալներ:







Գծապատկեր 1. ՀՀ ազգային պարենային հաշվեկշիռը (2004-2006թթ.), հազ.տոննա[1] (շարունակություն):

[1] Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ տվյալներ:



Գծապատկեր 1. ՀՀ ազգային պարենային հաշվեկշիռը (2004-2006թթ.), հազ.տոննա[1] (շարունակություն):

Հայաստանի Հանրապետության ագրարային ոլորտի գործունեության ապահովման համար անհրաժեշտ են՝

- բնական արտադրական ներուժի արդյունավետ օգտագործում,
- ագրարային բարեփոխումների խորացում,
- տնտեսավարման ձևերի կատարելագործում,
- փոքր և միջին ձեռնարկատիրության դինամիկ զարգացում,
- աշխատանքի շուկայի կայունացում,
- աշխատանքի արտադրողականության բարձրացում,
- գյուղատնտեսական ենթակառուցվածքների գործունեության բարելավում:

Ագրովերամշակման գործունեություն իրականացնող փոքր և միջին ձեռնարկատիրական սուբյեկտները կարող են մեծ նշանակություն ունենալ երկրի պարենային ապահովման խնդրի լուծման գործում (ներքին շուկայի՝ տեղական արտադրության բարձրորակ և մրցունակ պարենամթերքով ապահովում, տեղական գյուղատնտեսական հումքի արդյունավետ օգտագործում, տարածաշրջանների միջև գոյություն ունեցող անհամամասնությունների հաղթահարում և նրանց միջև տնտեսական համագործակցության զարգացում):

Վերջին տարիներին նկատելիորեն ավելացել է ագրովերամշակման հզորությունը, սակայն գյուղատնտեսական հումք վերամշակող համակարգի զարգացման համար, հատկապես հեռավոր մարզերում, լուրջ ուշադրության է արժանի վերամշակող սուբյեկտների արտադրական հզորությունների տեխնիկական վերազինման, նոր տեխնոլոգիաների ներդրման, տեղական ապրանքարտադրողների շահերի պաշտպանության հարցերի լուծումը՝ մասնավոր հատվածում գյուղատնտեսական տեխնիկա ներմուծող ընկերությունների մատչելի վարկավորման և տնտեսական բարենպաստ միջավայրի ձևավորման միջոցով: Գյուղատնտեսական հումքի արտադրության զգալի ներուժ ունեցող մարզերում անհրաժեշտ է արտադրական ուժերի ռացիոնալ տեղաբաշխում և ուղղվածություն, որը կխթանի ագրովերամշակման ուղղվածության փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացումը և կօգնի տարածաշրջանների ներդաշնակ զարգացմանը և գյուղատնտեսական ներուժի արդյունավետ օգտագործմանը:

Ագրովերամշակման ոլորտում փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման խթանման միջոցով հնարավոր է՝

[1] Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ տվյալներ:

- նպաստել հանրապետության տարածաշրջանների ներդաշնակ զարգացմանը,
- գյուղատնտեսական բնակչության եկամուտների ավելացմանը և աղքատության հաղթահարմանը,
- երկրի պարենային անվտանգության մակարդակի բարձրացմանը,
- գյուղատնտեսական արտադրության կառուցվածքի օպտիմալացմանը,
- արտադրական, շուկայական և սոցիալական ենթակառուցվածքների կենսունակության բարձրացմանը,
- գյուղական բնակավայրերի ամրապնդմանը:

Գյուղական տնտեսությունները, ենթարկվելով շուկայական կառուցվածքի փոփոխություններին, արտադրության մեջ աստիճանաբար մեծացնում են բարձրարժեք մշակաբույսերի արտադրությունը, որն էլ օգնում է ագրովերամշակման հատվածի զարգացմանը և գյուղատնտեսական արտադրանքի արտահանման ծավալների ավելացմանը:

Կարևորելով պետության կողմից ուղղակի աջակցության անհրաժեշտությունը գյուղատնտեսական հումքի վերամշակման համակարգում՝ կարելի է առանձնացնել հետևյալ ուղղությունները.

- աջակցություն շուկային արագ հարմարվող փոքր արտադրությունների ստեղծմանը,
- մասնագիտական կադրերի պատրաստման և առաջադիմական տեխնոլոգիաների ներդրման միջամտություն,
- հումք արտադրողների միջև կոոպերացիայի ձևավորման աջակցություն,
- վերամշակող արդյունաբերության արտադրության ուղղությամբ փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման խթանում,
- խաղողագործության և գինեգործության զարգացման գործում տեղական և արտաքին ներդրումների համար բարենպաստ գործարար և ներդրումային միջավայրի ձևավորում,
- մակրոտնտեսական նպաստավոր միջավայրի միջոցով գործարարության ռիսկերի նվազեցում և ներդրումային կանխատեսելի պայմանների ապահովում:

Վերջին տարիներին մի շարք միջազգային ներդրումային կազմակերպությունների վարկային օժանդակության հաշվին /Լինսի հիմնադրամ, Համաշխարհային բանկ, Գյուղական զարգացման միջազգային հիմնադրամ/ վերագործարկվել են ագրովերամշակման ճյուղերում մի քանի արտադրություններ, և ստեղծվել են գյուղմթերքներ վերամշակող նոր ընկերություններ, որոնց միջոցով որոշ չափով լուծվել են պտղի, ծխախոտի, հացահատիկի, մսի և կաթի արտադրության հարցերը:

Այսպես, ըստ ՓՄՁԱԿ-ի տվյալների, ՀՀ մարզերում գյուղատնտեսական մթերքների վերամշակմամբ զբաղվող գործող ՓՄՁ սուբյեկտները տեղաբաշխված են հետևյալ կերպ. Արագածոտնում գործում են տարբեր մասնագիտացմամբ 17 փոքր ու միջին ձեռնարկություններ, Արարատում՝ 16, Արմավիրում՝ 15, Գեղարքունիքում՝ 20, Լոռիում՝ 15, Կոտայքում՝ 18, Շիրակում՝ 20, Սյունիքում՝ 23, Վայոց Ձորում՝ 20 և Տավուշում՝ 24:

Ինչ խոսք, արտահանման ներուժ ունեցող արտադրատեսակների արտադրության ավելացման միջոցով մի շարք ներմուծվող արտադրատեսակներ աստիճանաբար փոխարինվում են տեղական արտադրության պարենամթերքով: Կարևորելով փոքր և միջին ձեռնարկատիրական սուբյեկտների ստեղծումը և զարգացումը հանրապետության տարածաշրջաններում եղած մարդկային, հումքային, նյութատեխնիկական ռեսուրսների բազայի հիման վրա, արտոնյալ վարկավորման տրամադրման միջոցով հնարավոր է ստեղծել նոր փոքր և միջին ձեռնարկատիրական սուբյեկտներ, հիմնականում՝

1. պահածոների, տոմատի մածուկի, բաղրիջանի խավիարի արտադրություն,
2. կարտոֆիլի և հացահատիկի վերամշակում,
3. պտղի, բանջարեղենի, կարտոֆիլի սառնարանային և պահեստային տնտեսությունների կազմակերպում,

4. կաթի մթերման և կաթնամթերքի արտադրության կարողությունների ստեղծում (տե՛ս գծապատկեր 2):



Գծապատկեր 2. ՀՀ ագրոարդյունաբերական համակարգում 2006-2009թթ. առաջարկվող փոքր և միջին ձեռնարկատիրության սուբյեկտների բաշխվածությունը՝ ըստ ուղղվածության, մարզային կտրվածքով[1]:

[1] Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ տվյալներ:

ՀՀ մարզերում փոքր ու միջին ձեռնարկատիրության զարգացմամբ գյուղատնտեսական ներուժի օգտագործման արդյունավետության բարձրացման համար պետության կողմից նախատեսվող միջոցառումները կուղղվեն գյուղական համայնքներում գյուղատնտեսական մթերքների վերամշակման փոքր ու միջին ձեռնարկությունների ձևավորմանը: Մասնավորապես, գծապատկեր 2-ում պատկերված առաջարկվող 260 փոքր ու միջին ձեռնարկությունների ձևավորմանը:

ՆՈՐԱՅՐ ՄԱՆԱՍԵՐՅԱՆ

տ.գ.դ., պրոֆեսոր

ՀՈՂԻ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Հողի կադաստրային գնահատումը և ագրարային հարցի ուսումնասիրությունն ունեն երկու ասպեկտ՝ պատմական և ժամանակակից: Տարբեր դարաշրջանների ագրարային հարաբերությունները և ագրարային հարցը ուսումնասիրվել և լուսաբանվել են 20-րդ դարի մի շարք հայ տնտեսագետների և պատմաբանների աշխատություններում, հատկապես Մ. Ադոնցի, Հ. Թումանյանի, Ն. Թովմասյանի, Ա. Փափազյանի, Մ. Խոնդկարյանի, Մ. Եգանյանի և մյուս հեղինակների մենագրություններում և գիտական թեզերում: Նշված հեղինակների աշխատությունները վերաբերում են հիմնականում Հայաստանի միջնադարյան և նորագույն պատմության շրջանների ագրարային հարաբերությունների լուսաբանմանը: Պրոֆ. Հ. Թումանյանը փորձում է տալ «Ֆեոդալական ռենտա և գյուղացիության շահագործման այլ ձևերի» ընդհանուր բնութագիրը[1]: Մյուս հեղինակներն իրենց ուսումնասիրությունը նվիրում են պատմության առանձին հատվածների դարաշրջաններին: Օրինակ՝ Լ. Բաբայանը լուսաբանում է Զաքարյանների և մոնղոլական արշավանքների ժամանակաշրջանի, մասնավորապես մոնղոլների ագրարային քաղաքականությունը[2]:

Ա. Փափազյանը իր մենագրությունը նվիրում է Արևելյան Հայաստանի՝ XV-XVI դարերի ագրարային հարաբերություններին, մասնավորապես Սեֆերյան Իրանից ընդօրինակած ֆեոդալական հողատիրության, ինչպես նաև հարկային համակարգի ուսումնասիրությանը, որոնք ընդհանուր հետաքրքրություն են ներկայացնում Մերձավոր Արևելքի երկրների համար[3]:

Հայ տնտեսագետների հատուկ ուշադրությանն է արժանացել Արևելյան Հայաստանի սոցիալ-տնտեսական և ագրարային հարաբերությունների ուսումնասիրությունը: Այստեղ աչքի են ընկնում պրոֆ. Մ. Ադոնցի մենագրությունները: Ուշադրության են արժանի հատկապես պրոֆեսոր Մ. Ադոնցի հայերեն մենագրության հիմնադրույթները Հայաստանի այդ շրջանի ագրարային հարաբերությունների վերաբերյալ:

Խորհրդային և հատկապես կոլտնտեսային-խորհրդային ժամանակաշրջանի ագրարային համակարգը մերժեց ագրարային հարաբերությունների ամբողջ նախընթաց պատմական զարգացումը: Դրան համապատասխան մերժվեցին նաև ագրարային հարաբերությունների դարավոր-ավանդական կատեգորիաները և հասկացությունները՝ հողի մասնավոր սեփականությունը, ազատ շուկան, շահույթը, հողային ռենտան և հողի գինը: Այդ կատեգորիաների օգտագործումն անգամ համարվում էր հանցանշան:

Ագրարային հարցը համարվում էր ընդմիշտ լուծված: Պաշտոնական և նույնիսկ գիտական մամուլը «խնամքով» շրջանցում էր այս ոլորտում գոյություն ունեցող հիմնախնդիրները՝

---

[1] Հ. Ե. Թումանյան ,Հայաստանի տնտեսական զարգացման պատմություն, Երևան, 1960:
[2] Л. Л. Бабаян "Социально-экономическая и политическая история Армении в XIII-XIV веках" Москва, 1969.
[3] А. Д. Папазян "Аграрные отношеня в Восточной Армении в XVI-XVII веках" Ереван, 1972.